



ԱՐՄԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ «ԼՈՒԾՍԱՆ» ԳՈՐԾՈՒՄ

Մերձավորարեւելյան տարածաշրջանը մշտապես եղել է բազմաշերտ հակասությունների դաշտ, որտեղ խաչվել են ինչպես միջազգային հարաբերություններում հիմնական դերակատարների, այնպես եւ տարածաշրջանային առաջատար երկրների շահերը: Դեռ Առաջին աշխարհամարտի տարիներին Անտանտի երկրների ղեկավարները, անդրադառնալով Օսմանյան կայսրության խնդրին, բազմիցս հայտարարել էին, որ վերջինիս տարածքային ամբողջականության մասին խոսք լինել չի կարող, եւ Թուրքիան պետք է մասնատվի:

Թեեւ Առաջին աշխարհամարտից հետո աշխարհաքաղաքական փոփոխությունների եւ վերադասավորումների հետեւանքով Թուրքիայի համար միջազգային բավական անբարենպաստ իրավիճակ էր ստեղծվել, սակայն պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ իրադարձությունների զարգացմանը զուգընթաց, փոխվեցին նաեւ մեծ տերությունների քաղաքական դիրքորոշումները: «Օսմանյան ժառանգության» բաժանման հետպատերազմյան ծրագրերը սուր հակասություններ առաջ բերեցին դաշնակիցների ճամբարում: Տարածայնությունները խորն էին հատկապես Անգլիայի եւ Ֆրանսիայի միջեւ, որոնք ավելի ցայտուն դրսևորվեցին հետագա իրադարձությունների ընթացքում: Ի տարբերություն բրիտանական ղեկավար շրջանների՝ Ֆրանսիան դեմ էր Թուրքիայի տարածքային մասնատմանը, որն էլ պայմանավորված էր Օսմանյան կայսրությունում նրա ունեցած տնտեսական եւ դրամական շահերով:

Կիլիկիան Սալքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով կազմելու էր Ֆրանսիական ազդեցության գոտի, բայց Մուգրոսի զինադադարի ստորագրման պահին Ֆրանսիան, ինչպես գնդապետ է. Բրեմոնն է վկայում,

շուներ բավարար քանակությամբ զորք՝ իրականացնելու Կիլիկիայի գրավումը¹ (Ադանայի նահանգի ազատագրումն իրականացվել է Հայկական լեգեոնի կողմից)² : Այս պատճառով էլ զինվորական ամբողջ իշխանությունը Կիլիկիայում անցավ անգլիացիների ձեռքը: Սակայն 1919 թ. սեպտեմբերի 13-ին Անգլիայի եւ Ֆրանսիայի կառավարությունների միջեւ ձեռք բերվեց համաձայնություն, ըստ որի՝ «1919 թ. նոյեմբերին Արեւմտյան Սիրիայում եւ Կիլիկիայում անգլիական հրամանատարության տակ գտնվող տարածքներում ֆրանսիական հրամանատարություն կհաստատվի, որից թուրքերը դժգոհ էին»³: Հետեւանք եղավ Կիլիկիայի վարչական հսկողության հանձնումը ֆրանսիական սպաներին, իսկ գնդապետ է. Բրեմոնը նշանակվեց «Հյուսիսային գոտու» վերահսկողության ղեկավար:

Այս ընթացքում դրությունը հատկապես ծանր էր Մարաշում⁴, որտեղ էլ 1920 թ. հունվարի 21-ին բռնկվեց վաղուց նախապատրաստված հակաֆրանսիական ապստամբություն: Գեներալ Քերեթը, որն ստանձնել էր ֆրանսիական զորքերի հրամանատարությունը, ոչինչ չձեռնարկեց ապստամբությունը ճնշելու համար: Ավելին՝ նա «անսպասելի» հրաման տվեց ֆրանսիական զորքերին նահանջելու: Թեեւ գնդապետ է. Բրեմոնն այդ քայլը որակեց «հանելուկային», սակայն հետագայում հենց ինքն էլ խոստովանում է. «Մարաշի պարպումը կարգադրվել էր գնդապետ Նորմանի կողմից, որը Բեյրութից եկել էր անձամբ գեներալ Ա. Գուրոյի հրահանգով»⁵: Չնայած է. Բրեմոնը հավաստիացնում էր, որ «իրենք լի են վճռականությամբ՝ զբաղվելու բացառապես հայերի խնդիրներով»⁶, սակայն Մարաշի ծրագրված նահանջը վերստին հաստատեց Կիլիկիա-

¹ S^{én} E. BREMOND, La Cilicie en 1919—1920, Paris, 1921, էջ 10:

² Մանրամասն տե՛ս Ա. ՊՈՂՈՍՅԱՆ, Հայկական լեգեոնի եւ դաշնակցային զորքերի ուժերով Կիլիկիայի ազատագրման հարցի շուրջ, «Պատմություն եւ հասարակագիտություն» տարեգիրք (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 3, 2017, էջ 38—46:

³ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (այսուհետ՝ ՄՄ): Այլեւայլ հեղինակների արխիվ, Գետրգ Պապոյան, թղթ. 240, վավ. 1, էջ 2:

⁴ Մարաշում տեղի ունեցած դեպքերի մասին հավաստի վկայություններ է հաղորդում Մարաշի ֆրանցիսկյան վանքի վանահայր Մատերն Մյուրոն իր «Մարաշի ջարդը 1920 թ. փետրվարին» գրքով: S^{én} M. MATERNE, Le massacre de Marache (Fevrie 1920), Extrait du Flambeau revue belge des questions politiques et litteraires, 4^e annee, №1, janvier, 1921. Paris, 1921, էջ 5:

⁵ E. BREMOND, նշ. աշխ, էջ 41:

⁶ S^{én} Ա. ՊԵՅԼԵՐՅԱՆ, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը եւ հայերը ֆրանսիական արխիվներում 1914—1918, Փաստաթղթերի ժողովածու, հտ. 2, Երեւան, 2005, էջ 125:

յի հարցում Ֆրանսիայի անվճռականությունը եւ ավելի սեւեռուն դարձրեց այն համոզմունքը, որ Կիլիկիան, Սիրիայի համեմատ, ինչքան էլ որ այդ երկրամասը տնտեսական մեծ ներուժ ունենա, ֆրանսիական դիվանագիտության հաշվարկներում ստորադաս տեղ է գրավում: Է. Բրեմոնը Մարաշի կորուստը գնահատեց որպես «սարսափելի հարված ֆրանսիական հեղինակությանը»⁷, սակայն «մոռացավ» նշել, թե այդ կորուստն ինչ սարսափելի հարված էր տեղի հայ ազգաբնակչության համար: «Դրանք ջարդի եւ բնաջնջման օրեր էին»,— վկայում է Մ. Մյուրոնը⁸, որն ականատես էր հայ ազգաբնակչության նկատմամբ թուրքերի կատարած հրեշավոր վայրագությունների:

«Ֆրանսիայի քաղաքականությունը Կիլիկիայում կրկին փոխվեց, երբ գեներալ Ա. Գուրոն ժամանեց Մերսին,— գրում է «Թայմս»-ի Կ. Պոլսի թղթակիցը եւ հավելում,— Գուրոն հրամայեց հայ ղեկավարներին զինաթափել կամավորական ջոկատները, սակայն հայերը հրաժարվեցին ենթարկվել, որից հետո գեներալ ուժով շուրջ 1400 հայ վտարվեց: Դրանից հետո գեներալ Ա. Գուրոն տեղեկացրեց հայերին, որ շուտով ֆրանսիացիները թողնելու են Կիլիկիան. հայերը պետք է ընտրեն կամ թուրքական տիրապետությունը, կամ հեռանան երկրից»⁹:

Կիլիկիահայությունը բազիցս նամակներ ու հեռագրեր է ուղարկում ինչպես բարձրագույն կոմիսարին, այնպես էլ Ֆրանսիայի վարչապետին՝ նշելով, որ «Կիլիկիայի հայ բնակչությունը գտնվում է սոսկալի ճգնաժամի մեջ, որ ամենուր տիրում է անապահովության ու վախի մթնոլորտ, եւ միայն պաշտպանական լուրջ միջոցառումները կարող են ամբողջական բնաջնջումից փրկել 150 000 հայ բնակչությանը»¹⁰: Սակայն Ֆրանսիայի ղեկավար շրջաններն անտեսեցին դա, եւ «նույնիսկ միջոցառումներ ձեռք առնվեցին հայության զինաթափման եւ Կիլիկիայից նրանց տեղահանման համար»¹¹: Մարաշի ղեպքերից հետո ֆրանսիական քաղաքականության հաջորդ գոհը դարձավ բոլորովին բախտի քմահաճույքին թողնված Հաճընը, որտեղ նույնպես քաղաքի ինքնապաշտպանական ուժերին չհատկացվեց խոստացված օգնությունը: Իրադարձություններն

⁷ Տե՛ս անդ, էջ 163:

⁸ M. MATERNE, նշ. աշխ., էջ 8—11:

⁹ Бюллетень НКВД, №90, 22.11.1920, с. 44.

¹⁰ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 546, թ. 13:

¹¹ Անդ:

այլ զարգացում ունեցան Ուրֆայում եւ Այնթապում, որոնք նույնպէս մտնում էին ֆրանսիական զորքերի գրաված գոտու մեջ: Տեղի ֆրանսիական ուժերին եւ հայ ինքնապաշտպանական ջոկատներին հաջողվում է ժամանակավորապէս վերահսկել իրադրութիւնը, որի շնորհիվ տեղի հայ ազգաբնակչութիւնը փրկվում է ոչնչացումից:

«Անհնար է ֆրանսիացի զինվորներին հրամայել կռվել Արեւմտյան Ասիայում: Մենք մեծ ափսոսանքով հեռացանք Կիլիկիայից, որովհետեւ ռազմամթերքի պատճառով այլ կերպ չէինք կարող», — փորձում է արդարանալ ֆրանսիացի դիվանագետ Մէյերը՝ Պողոս Նուբարին հասցեագրված նամակում (31.05.1922)¹²:

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ Ֆրանսիայի շահերը Կիլիկիայում երկրորդական էին՝ ողջ Թուրքիայում նրա ունեցած տնտեսական, ֆինանսական եւ քաղաքական շահերի համեմատ: Հետեւաբար իզուր էր Կ. Պոլսի հայոց պատրիարքը Ա. Միլերանին ուղարկած նամակում զարմանում, որ «հաղթված Թուրքը ֆրանսիական գոտում հեշտությամբ վերագառնում է մահ ու ավեր տարածելու իր սովորական գործին»¹³: Ֆրանսիական դիվանագիտութեան այս վայրիվերումների հետեւանքով արդեն իսկ նշմարվում էին Կիլիկիան Թուրքիային վերադարձնելու հեռանկարները, որոնք էլ ամրագրվեցին 1921 թ. հոկտեմբերի 20-ի՝ Անկարայի պայմանագրում:

Ֆրանսիացի հեղինակ Մ. Պալարեսը, արտահայտելով ֆրանսիական բարձրաստիճան հրամանատարութեան շրջանակներում տիրող համոզմունքները, շեշտում է. «Ինչ ենք փնտրում այստեղ. մեր հեղինակութեան պահպանում, մեր առեւտրի ազատ զարգացում, մեր դրամական շահերի ապահովում. մենք այս բոլորը կունենանք ֆրանս-թուրքական համագործակցութեան շնորհիվ եւ դրա համար պետք է պաշտպանենք Թուրքերին»¹⁴:

Այս ճանապարհին ֆրանսիական դիվանագիտութիւնն առաջին քայլը կատարեց 1919 թ. վերջերին՝ փորձելով դիվանագիտական կապեր ստեղծել Մուստաֆա Քեմալի ղեկավարած Սվազի ներկայացուցչական կոմիտեի հետ: Այդ նպատակով 1919 թ. դեկտեմբերին Սիրիայում եւ Կիլիկիայում Ֆրանսիայի բարձրագույն կոմիսար Ժորժ Պիկոն ժամանում է Սվազ: Մինչ այդ Ժ. Պիկոն Կեսարիայում (դեկտեմբերի 6-ին) հանդիպում

¹² ՄՄ, Այլեւալ հեղինակների արխիվ, թղթ. 240 թ, վավ. 11բ:

¹³ Նամակն ամբողջութեամբ տե՛ս անդ:

¹⁴ M. PAILLARES, Le Kémalisme devant les Allie's, Paris, 1922, p. 78.

է ունենում Ալի Ֆուադ Զեբեսոյի հետ, որն այդ ժամանակ Անկարայի կառավարութեան առաջին դեսպանն էր Ռուսաստանում¹⁵։ Ժ. Պիկոյի այցի շարժառիթները եւ Քեմալի հետ ունեցած նրա հանդիպումների վերաբերյալ հանգամանալից տեղեկություններ է հաղորդում հենց Ա. Զեբեսոյը։ Վերջինիս հետ հանդիպման ժամանակ Ժ. Պիկոն Ֆուադ փաշային վստահեցնում է, որ «ինչպես պարոն Ա. Բրիանի, այնպես էլ Ֆրանսիական դիվանագիտութեան նպատակն է ստեղծել այնպիսի հնարավորություն, որ Միջին Արեւելքում թուրքական մեծամասնություն կազմող հատվածում հիմնվի ուժեղ եւ անկախ թուրքական պետություն»¹⁶։ Ժ. Պիկոն այնուհետեւ ժամանում է Սվազ եւ հանդիպում ներկայացուցչական կոմիտեի ղեկավար Մ. Քեմալի հետ։ Բարձրագույն կոմիսարը Մ. Քեմալ փաշային նույնպես հայտնում է Ֆրանսիայի կառավարութեան կազմի առաջիկա փոփոխութեան եւ Ա. Բրիանի կողմից կազմվող նոր կառավարութեան մասին եւ ավելացնում. «Այն լիովին կպաշտպանի թուրքական ազգային քաղաքականությունը»¹⁷։

Քե դ' Օրսեի ղեկավարները, դաշնակից Անգլիայից առանձին, Անկարայի կառավարութեան հետ համաձայնութեան գալու եւ Կիլիկիայում ռազմական գործողությունները դադարեցնելու նոր փորձ կատարեցին։ Զինադադար ստորագրելու նպատակով «1920 թ. մայիսին Ֆրանսիացիները բանակցություններ սկսեցին Մ. Քեմալի հետ»¹⁸։ Սկզբում Անկարա է ժամանում մեկ բարձրաստիճան զինվորական եւ մեկ նահանգային ներկայացուցիչ, բայց այդ բանակցությունները նշանակալի արդյունք չեն տալիս։ Արդեն մայիսի վերջին Անկարա է մեկնում Բեյրութում Ֆրանսիական գերագույն կոմիսարիատի քարտուղար Ռոբեր դ' Քեի գլխավորած առաքելությունը, որի հետ էլ մայիսի 30-ին ստորագրվում է զինադադարի 20-օրյա համաձայնագիր։ «1920 թ. մայիսի 28-ին Ֆրանսիական հրամանատարութեան հետ կնքած համաձայնագիրը շատ կարեւոր էր մեզ համար»,— գրում է թուրք պատմաբան Շ. Թուրանը¹⁹։

Համաձայնագրում ասվում էր, որ թշնամական բոլոր գործողությունները պետք է դադարեցվեն մայիսի 30-ի կեսգիշերից. առաջին 10 օրվա

¹⁵ S. A. CEBESOV, Milli mücadele hatıraları, İstanbul, 1953, էջ 267։

¹⁶ Անդ, էջ 268։

¹⁷ Անդ։

¹⁸ R. MANTRAN, Histoire de la Turquie, Paris, 1983, p. 117.

¹⁹ T. ŞERAFETTİN, Türk devrim Tarihi, kitap 2, Ankara, 1992, s. 215.

ընթացքում ֆրանսիական եւ մահմեդական բոլոր բանտարկյալները՝ ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքական, պետք է փոխանակվեին, ֆրանսիական զորքերը պետք է նահանջեին մինչեւ Մերսին—Ադանա—Իսլահիե երկաթգիծ, Սսի, Պոզանտի, Այնթապի, ինչպես նաեւ երկաթգծից հյուսիս ընկած քաղաքները պետք է պարպվեին²⁰։ Այս առնչությամբ «Թայմսը» գրում է. «Անհավանական է թվում, որ այդ 4—5 քաղաքները, որոնք գտնվում էին մեր ազդեցության գոտու մեջ, 1920 թ. մայիսից սկսած՝ անցել են քեմալական չեթենների եւ էմիր Ֆեյսալի ձեռքը, եւ միայն նրա մի փոքր հատվածն է մեր ձեռքին»²¹։

Անկասկած, 1920 թ. մայիսի 30-ի զինադադարը կարելի է համարել Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության եւ Մ. Քեմալի լուրջ ձեռքբերումը, որն էլ ավելի ամրապնդեց վերջինիս դիրքերը, բարձրացրեց ազգային շարժման հեղինակությունը՝ նպաստելով ուժերի համախմբմանը։

«Բանն այն է, որ Ազգային Մեծ ժողովը եւ նրա կառավարությունը չէին ճանաչվել Անտանտի երկրների կողմից, ընդհակառակը, ապագա պետության եւ ժողովրդին վերաբերող հարցերով այդ պետություններն առնչվում էին Դամադ Ֆերիդ փաշայի ստամբուլյան կառավարության հետ։ Դրա հետ կապված այն փաստը, որ ֆրանսիացիները, շրջանցելով Ստամբուլի կառավարությունը, մեզ հետ բանակցություններ էին վարում եւ ստորագրում համաձայնագիր, մեզ համար դա քաղաքական խոշոր նվաճում է, ինչպիսի հարցերով էլ այն լինի»,— գրում է Մ. Քեմալը²²։

Իսկ ինչ վերաբերում է Ֆրանսիային, թե արդյոք ինչ-որ բան շահեց այդ զինադադարից, կարող ենք նշել, որ ֆրանսիացիները ոչինչ էլ չքաղեցին, եւ ինչպես գնդապետ է. Բրեմոնն է գրում. «Այն հիասթափություն առաջացրեց ֆրանսիական զենքի հանդեպ... եւ մեզանից վանեց մեր համախոհներից շատերին»²³։

Ամեն դեպքում, 1920 թ. մայիսի 30-ի ֆրանս-քեմալական զինադադարն Անկարայի եւ Անտանտի երկրներից մեկի՝ Ֆրանսիայի միջեւ առաջին անմիջական բանակցությունների հետեւանքն էր։ Ֆրանսիայի ղեկավար շրջանները, թեեւ զգուշորեն, փորձում էին Անկա-

²⁰ Տե՛ս անդ, էջ 215—216։

²¹ Бюллетень НКВД, №30, 05.09, Москва, 1920, с. 40.

²² М. КЕМАЛЬ, Путь Новой Турции, Москва, 1929, т. 1, с. 88.

²³ E. BREMOND, նշ. աշխ., էջ 54։

րայի հետ հասնել անջատ հաշտության, սակայն այս պարագայում այլընտրանք չունեին եւ հարկադրված էին Անգլիայի հետ հանդես գալու միասնական ճակատով եւ 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրելու Սեւրի պայմանագիրը:

Իսկ ֆրանսիացի մեկ այլ հեղինակ՝ Ժ. Պիշոնը, ուղղակի փաստանք է հայտնում բանակցությունների ձախողման համար. «Եթե Ժ. Պիկոյի բանակցություններն արդյունք տային, ապա մենք Կիլիկիայում անօգուտ ձեւով չէինք զոհաբերի մեր զինվորներին եւ մեր դրամը»²⁴:

1921 թ. սեպտեմբերին Ֆրանկլեն Բուլոնը կրկին Անկարայում էր՝ այս անգամ արդեն պաշտոնական առաքելությամբ: Ֆրանսիացի դիվանագետի բանակցությունները Յուսուֆ Քեմալ բեյի եւ Մ. Քեմալի հետ, ինչպես բնութագրել է Ի. Ինյոնյուն, «ընթացան շատ բարեկամական մթնոլորտում»²⁵: Այդ բանակցություններից հետո՝ 1921 թ. հոկտեմբերի 20-ին, ստորագրվում է ֆրանս-թուրքական պայմանագիր, որը հայտնի է «Անկարայի» կամ «Ֆրանկլեն Բուլոնի պայմանագիր» անունով²⁶: Պայմանագիրը հանդիսացավ այն քաղաքականության տրամաբանական ավարտը, որը կար Ֆրանսիայի եւ Թուրքիայի միջեւ:

Պայմանագրի ստորագրման օրն արտաքին գործերի նախարար Յուսուֆ Քեմալը Ֆ. Բուլոնին հանձնում է մի նամակ, որը, ըստ էության, պայմանագրի առանձին կետերի լրացում էր²⁷: Նամակում Քեմալ բեյն իր գոհունակությունն է հայտնում երկու երկրների միջեւ նախկինում գոյություն ունեցող սերտ հարաբերությունների վերականգնման եւ ամրապնդման համար եւ հույս հայտնում, որ Ֆրանսիայի հանրապետության կառավարությունը կձգտի հասնել համաձայնության բոլոր այն հարցերում, որոնք առնչվում են Թուրքիայի ինքնիշխանությանն ու անկախությանը: Նամակում նաեւ նշվում էր, որ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը մտադիր է խուրջուղի հովտում 99 տարով ֆրանսիական ընկերություններին տրամադրել երկաթի, քրոմի եւ արծաթի շահագործման թույլտվություն (կոնցեսիա)՝ պայմանով, որ դրանց շահագործման մեջ ապահովվի թուրքական դրամական միջոցների մին-

²⁴ J. PICHON, Le partage du Proche-Orient, Paris, 1938, p. 203.

²⁵ S. I. İNÖNÜ, Hatıralar, Ankara, 1985, kitap 1, 52 278:

²⁶ S. V. YILMAZ, Siyasi Tarih, İstanbul, 1998, 52 194—195:

²⁷ Նամակի բովանդակությունը տես նաեւ O. BASKIN, Türk dış Politikası, cilt, 1, İstanbul, 2001, 52 145—150:

չեւ 50 տոկոս մասնակցություն: Բացի դրանից՝ կառավարությունը հայտարարում է, որ պատրաստ է արտոնություններ տրամադրել հանքավայրերի, երկաթուղու եւ նավահանգիստների շահագործման ոլորտում՝ Թուրքիայի եւ Ֆրանսիայի շահերին փոխադարձաբար համապատասխանելու պայմանով²⁸: Նամակում Ազգային կառավարությունը կարեւորում է նաեւ երկու երկրների միջեւ մշակութային, տնտեսական, ֆինանսական համագործակցության ընդլայնումը²⁹:

Դատելով պայմանագրի հոդվածներից եւ նամակի բովանդակությունից՝ կարող ենք արձանագրել, որ այն ընդգրկում էր համագործակցության գրեթե բոլոր ոլորտները: Նախ եւ առաջ համաձայնագրում շեշտադրվում էր քաղաքական երկխոսության, փոխշահավետ տնտեսական համագործակցության շարունակման եւ ընդլայնման նպատակով կողմերի միջեւ տարբեր մակարդակների շփումների կարեւորությունը: Ավելին՝ Ֆրանսիան ոչ միայն ճանաչում էր Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության օրինական բնույթը, այլեւ լուրջ զիջումներ էր կատարում Թուրքիայի օգտին:

Վերոնշյալ տեսակետը հիմնավորելու համար վերլուծենք պայմանագրի այն կետերը, որոնք սկզբունքային նշանակություն ունեն Թուրքիայի եւ Ֆրանսիայի համար:

Թուրքիայի համար սկզբունքային էին հատկապես 3-րդ եւ 4-րդ հոդվածները, որոնց համաձայն՝ ֆրանսիական զորքերը հետ են քաշվելու դեպի հարավ՝ Թուրքիային հանձնելով Կիլիկիան: Ֆրանսիական ուժերի տարհանումը Կիլիկիայից հնարավորություն էր ընձեռում քեմալականներին իրենց զորքերը տեղափոխել Արեւմտյան ճակատ՝ զգալիորեն ուժեղացնելով հակահունական թելը: Փաստորեն՝ Կիլիկիայից ֆրանսիացիների հեռանալու դեպքում շուրջ 80 հազար թուրք զինվոր կարող էր տեղափոխվել հունական ճակատ³⁰: Իր նշանակությամբ կարեւոր էր նաեւ 7-րդ հոդվածը, որով Ալեքսանդրետի սանջաքը թեւ մնաց Սիրիայի կազմում, սակայն հաստատվեց թուրքերի համար շահավետ «հատուկ կառավարման համակարգ»: Հետագայում այս դրույթի հիման վրա էլ Հանրապետական Թուրքիան պահանջեց Ալեքսանդրետի սանջաքը (Իսքենդերուն) միացնել իրեն:

²⁸ Сёу Н. Розалиев, Экономическая история турецкой республики, Москва, 1980, էջ 82:

²⁹ Сёу Б. Поцхвериа, Турция между двумя мировыми войнами, Москва, 1992, էջ 158—159:

³⁰ Сёу անդ, էջ 159:

Անկարայի կառավարության համար ձեռքբերում կարելի է համարել նաև ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցում 6-րդ հոդվածում տեղ գտած ձեռնարկումները՝ փոքրամասնությունների իրավունքները հանդիսավոր կերպով ճանաչվում են «Ազգային ուխտում»։ Այդպիսով՝ փոքրամասնությունների իրավունքների ճանաչման կարեւորագույն հարցն այստեղ փոխարինվում է «հանդիսավոր եւ ոչինչ չպարտավորեցնող մի ձեռնարկման հետ»։ Իսկ թե ինչ էին հասկանում քեմալականները «Ազգային ուխտում» տեղ գտած փոքրամասնությունների իրավունքների «ճանաչման» սկզբունքի տակ, լիովին հասկանալի է։ Անդրադառնալով այս հարցում ֆրանսիացիների դիրքորոշմանը՝ տեղին է մեջբերել Լ. Զորջի խոսքերը, որ «Ֆրանսիայի կառավարությանն այլևս չէր հետաքրքրում ճշված ժողովուրդների ազատագրումը»³¹։

Պայմանագրի 10-րդ հոդվածը, որը ձեռնտու էր ֆրանսիական կողմին, առնչվում էր Ֆրանսիային տրվող ֆինանսա-տնտեսական արտոնություններին եւ շահագործման թույլտվություններին։ Եթե ընդունենք, որ Թուրքիան պայմանագիրը կնքելիս առաջնորդվել է «Ազգային ուխտի» սկզբունքներով, ապա այս հոդվածով քեմալական կառավարությունը շեղվում է այդ սկզբունքներից եւ ֆրանսիացիներին կատարում էական զիջումներ։ Սակայն եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ Անկարայի կառավարությունն այդ շրջանում գտնվում էր դիվանագիտական մեկուսացման մեջ արեւմտյան տերությունների կողմից, ապա այդ զիջումները քեմալականների ձեռք բերած հաջողությունների համեմատ այդքան էլ կարեւոր չէին։ Բացի այդ՝ թե՛ Անկարայի պայմանագրով, թե՛ Յուսուֆ Բեմալ բեյի նամակով Ֆրանսիային հատկացվող շահագործման թույլտվություններին մասնակցություն էր ունենալու Թուրքական դրամը, եւ ամենակարեւորը՝ Անկարայի կառավարությունը կարող էր ցանկացած ժամանակ հայտարարել, որ տվյալ թույլտվությունները հակասում են Թուրքիայի ազգային շահերին։

Անկարայի պայմանագիրը ֆրանսիական դիվանագիտության համար մի քանի կարեւոր դիտանկյուն եւս ուներ. նախ այս պայմանագիրը մեծ գոհունակությամբ ընդունվեց մոսկովմանական աշխարհում, այդ թվում նաև Ֆրանսիայի գաղութային տիրույթներում, որն էլ նպաստեց

³¹ Л. Д Ж о р д ж, Правда о мирных договорах, т. 2, Москва, 1957, с. 403.

վերջինիս սասանված հեղինակության վերականգնմանը, եւ ամենագլխավորը՝ կարող էր Մերձավոր Արեւելքում հասնել ավելի շահեկան դրույթյան՝ Անգլիայի դիրքերի թուլացման հաշվին։ Անկարայի պայմանագրի հակաանգլիական ուղղվածության մասին են վկայում այն գաղտնի դրույթները, որոնք չարտացոլվեցին պայմանագրի բուն շարադրանքում. «Ֆրանսիան Թուրքիային է վաճառելու 200 մլն ֆրանկի արժողությամբ զենք ու զինամթերք՝ այդ թվում 10 հազար զինվորի լրիվ հանդերձանք, 8 հազար մաուզեր տիպի հրացան՝ իր ռազմամթերքով, 5 հազար ձի (նաեւ թնդանոթաքարշ ձիեր) եւ 12 օդանավ»³²։

Պայմանագիրը, որը ֆրանսիական խորհրդարանը վավերացրեց նոյեմբերի 1-ին, ինչպես տեսանք, ուղղված էր Ֆրանսիայի հիմնական մրցակցի՝ Անգլիայի շահերի դեմ։ Թուրքերին տրամադրելով ռազմական միջոցներ՝ Ֆրանսիայի կառավարող շրջանները շատ լավ հասկանում էին, որ դա նշանակում է քեմալականների դիրքերի ամրապնդում հակահունական ճակատում, որն էլ իր հերթին կհանգեցներ հակաանգլիական դիրքերի ուժեղացմանը։ Այս համապատկերում միանգամայն տրամաբանական է, որ լորդ Քերզոնին ուղղված նամակում անգլիացի դիվանագետն ուղղակիորեն նշում է, որ «Ֆրանսիայի քաղաքականությունը Մերձավոր Արեւելքում ներկայումս ուղղված է բրիտանական ազդեցության ու շահերի դեմ»³³։ Այս ամենից հետո, հասկանալի էր, ֆրանս-թուրքական պայմանագրի ստորագրումն Անգլիայի ղեկավար շրջաններում բողոքի աննախադեպ ալիք առաջացրեց։

Անգլիական կառավարությունը ֆրանսիացիներին մեղադրեց դաշնակցային պարտավորությունները չհարգելու մեջ. «...անգլիական կողմը գտնում էր, որ համաձայնագիրն անջատ դաշնագիր է՝ կնքված դաշնակիցների մեկի համար, թշնամի կառավարության հետ, դա մեծապես կազդի դաշնակիցների համագործակցության քաղաքականության վրա, որի նկատմամբ անգլիական կառավարությունը միշտ վստահություն է ունեցել»³⁴։ Իսկ 1921 թ. նոյեմբերի 5-ին լորդ Քերզոնը, Անգլիայում ֆրանսիական դեսպան Ս. Օլերի միջոցով բողոք-հուշագիր ներկայացրեց Ֆրանսիայի կառավարությանը, որը բաղկացած էր երկու մասից։

³² Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ, Ֆրանս-թուրքական հարաբերությունները եւ Կիլիկիան 1919–1921 թթ., Երեւան, 1970, էջ 242։

³³ “Documents on British Foreign Policy 1919–1939”, First series, vol. 4, London, 1952, p. 560.

³⁴ «Ճակատամարտ», 08.01.1922, Կ Պոլիս։

Անգլիայի ներկայացրած այս բողոքներից ու մեղադրանքներից Քեդ'Օրսեն սկզբում փորձեց պաշտպանվել մամուլի օգնությամբ: Ֆրանսիական մամուլը գրեթե միահամուռ կերպով սկսեց արտահայտել երկրի ընդհանուր գոհունակությունն Անկարայի պայմանագրի հարցում: Այդ օրերին ֆրանսիական մամուլում կարծես մրցակցում էին միմյանց հետ Ֆ. Բուլոնի հասցեին գովեստի խոսքեր շռայլելու մեջ՝ նշելով վերջինիս հեռատեսությունը: Արտաքին գործերի նախարարության պաշտոնաթերթ «Տան»-ն այն համարեց «բարերարություն աշխարհի համար»³⁵:

Իսկապես, Կիլիկիան տնտեսական առումով մեծ կարեւորություն ուներ, հատկապես արդյունաբերական որոշ ճյուղերի համար Կիլիկիայի երկրամասը շատ հեռանկարային էր: Դրանով հանդերձ՝ հետագայում Ժ. Կլեմանսոն խոստովանում է, որ չիմանալով է համաձայնել զիջել Մոսուլը. «Եթե դուք ինձ ասեիք, որ Միջագետքի զիջումը կհանգեցնի հսկայական տարածքների կորստի, ես կմերժեի ձեզ այդ հարցում»³⁶: Տնտեսական զարգացման լուրջ հեռանկարներ ունեցող Կիլիկիան թեեւ կարեւոր էր Ֆրանսիայի համար, բայց ֆրանսիացիների ծրագրերում շատ ավելի մեծ տեղ ուներ Սիրիան, որը, գտնվելով ռազմավարական չափազանց նպաստավոր դիրքում, կապող օղակ էր եւրոպական տերությունների եւ նրանց գաղութների միջեւ:

«Այս պայմանագրի նշանակությունը դուրս է եկել ֆրանս-թուրքական հարաբերությունների սահմանից, եւ այն ձեռնտու է Անգլիային եւ Անտանտի մյուս պետություններին», — հայտարարում էր Ա. Բրիանը³⁷: Միեւնույն ժամանակ իր դաշնակցի դժգոհությունը մեղմացնելու համար ֆրանսիական դիվանագիտությունը ջանում էր նվազեցնել պայմանագրի կարեւորությունը՝ տալով նրան զուտ մասնավոր բնույթի տեսք: Ֆրանսիական դեսպանության ներկայացուցիչ Դը Մոնտիլը 1921 թ. նոյեմբերին գրում է. «Անկարայի պայմանագիրը ոչինչ չի որոշում Թուրքիայի հետ հաշտություն կնքելու հարցում, այն իրենից չի ներկայացնում հաշտության պայմանագիր, այլ տեղական բնույթի մի համաձայնագիր է»³⁸: Անկասկած, համաձայնագրի կնքումը կարելի է որակել որպես լուրջ

³⁵ M. PAILLARES, նշ. աշխ., էջ 364:

³⁶ Ж. КАЙЗЕР, Европа и новая Турция, Москва, 1925, с. 125.

³⁷ Б. ПОЦХВЕРИ, նշ. աշխ., էջ 160:

³⁸ З. ЭФЕНДИЕВА, Борьба турецкого народа против французских оккупантов на Юге Анатолии 1919—1921, Баку, 1966, с. 143.

առաջխաղացում թուրք-ֆրանսիական հարաբերություններում: Սակայն դեռևս անպատասխան էր մնում այն հարցը, թե արդյո՞ք համաձայնագիրը քայլ էր դեպի համընդհանուր խաղաղ կարգավորումը, թե՞ ուղղակի ժամանակ շահելու միջոց:

Թվում է՝ քեմալականների հետ համաձայնության հասնելու դրդապատճառներից է նաեւ, որ այդ պայմանագիրը Ֆրանսիային հնարավորություն էր ընձեռում իր ողջ ուշադրությունը կենտրոնացնելու «հիմնական պատառի»՝ Սիրիայի վրա եւ խաղաղ պայմաններում իրականացնելու իր մանդատի կառավարումը:

Անկարայի պայմանագրի կարեւորությունը Ֆրանսիայի համար կարելի է ավարտել պայմանագրի հեղինակի՝ Ֆրանկլեն Բուլոնի, որին անվանում էին «Անգորայի հերոս», խոսքերով. «Ֆրանսիան իր բոլոր դաշնակիցներին մատուցում է մի այնպիսի ծառայություն, որի արժեքը երեւան կգա ամեն օր»³⁹: Սակայն Ֆ. Բուլոնը չի նշում, ավելի ճիշտ՝ չի ցանկանում նշել, թե իր «մատուցած անգնահատելի ծառայությունն» ինչ արժեք ունեցավ Կիլիկիայի եւ Կիլիկիահայություն համար: Իրավացի է ժ. Պիշոնը, երբ գրում է, որ հայերին տրված բոլոր հանդիսավոր խոստումները մոռացության մատնվեցին⁴⁰: Մ. Պայարեսը եւս ընդգծում է, որ «Անկարայի պայմանագիրը տազնապի, վախի ու հուսալքության մթնոլորտ ստեղծեց Կիլիկիայի քրիստոնյա ազգաբնակչության շրջանում՝ վշտի մեջ խորասուզելով երկու հարյուր հազար կիլիկեցիների»⁴¹:

Իսկ թե ինչպիսի արձագանքներ ունեցավ ֆրանս-թուրքական պայմանագիրն Անկարայի կառավարության եւ ընդհանրապես թուրքական շրջաններում, նշենք, որ Անկարայի պայմանագիրը մեծ ցնծությամբ ընդունվեց Թուրքիայում: Մամուլում այն գնահատվեց որպես Անկարայի կառավարության նվաճած խոշոր հաջողություն՝ «Ազգային ուխտի» մասնակի կենսագործում եւ ապագա դիվանագիտական հաղթանակի նախալրաբեր: «Արեւելքի խաղաղութիւնը ֆրանս-թուրքական համաձայնութիւնից շատ բան է շահելու»⁴²,— վկայակոչելով թուրքական մամուլի հրապարակումները՝ մեջբերում է «Առաւօտ»-ը:

³⁹ Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ, նշ. աշխ., էջ 254:

⁴⁰ SÉB. J. PICHON, Le partage du Proche-Orient, Paris, 1938, էջ 244:

⁴¹ M. PAILLARES, նշ. աշխ., էջ 366—367:

⁴² «Առաւօտ», 09. 01. 1922, Կ. Պոլիս:

«Այս պայմանագրի շնորհիվ մեր երկրի չափազանց կարեւոր շրջաններ ազատագրվեցին գրավումից՝ առանց զոհաբերելու մեր քաղաքական, տնտեսական, ռազմական կամ որեւէ այլ անկախություն... Մեր ազգային նկրտումներն առաջին անգամ ճանաչվեցին ու ամրագրվեցին արեւմտյան տերություններից մեկի հետ կնքված պայմանագրով»⁴³,— հայտարարեց Մ. Քեմալը:

Ընդհանրացնելով Անկարայի պայմանագրի շուրջ առաջացած անգլո-ֆրանսիական փաստաթղթային իրարանցումը՝ կարելի է ընդգծել, որ ֆրանս-թուրքական պայմանագիրն էլ ավելի խորացրեց արտաքուստ դաշնակցային թվացող անգլո-ֆրանսիական հարաբերություններում առկա հակասությունները: Իսկապես, 1921 թ. պայմանագրով Ֆրանսիան՝ արեւմտյան տերություններից առաջինը ճանաչեց Անկարայի կառավարությունը⁴⁴, որն էլ լուրջ ճեղքվածք առաջացրեց մինչ այդ թուրքական ազգային իշխանությունների դեմ համատեղ հանդես եկող Անտանտի ճամբարում: Այս համապատկերում կիսում ենք ֆրանսիացի հեղինակներ Ռ. Գոնտո-Բիրոնի եւ Լ. Ռեվերանի տեսակետը: Նրանք իրավացիորեն «Անկարայի պայմանագիրը համարում են Ֆրանսիայի զիջողականության հաջորդ դրսևորումը»⁴⁵:

Այդպիսով՝ Ֆրանսիան ձեռք բերեց մի շարք տնտեսական արտոնություններ Թուրքիայում եւ ամրապնդեց իր դիրքերը, այդուհանդերձ, գտնում ենք, որ պայմանագիրը շատ ավելի ձեռնտու էր Թուրքիային, քանի որ Կիլիկիայի պարպումով քեմալական կառավարությունն արդեն կարող է լիովին օգտագործել այդ երկրամասի ներուժը, միաժամանակ այս ճակատի հաշվին նշանակալի չափով բարձրացնել իր զինված ուժերի դիմադրողականությունն Արեւմտյան ճակատում:

Ընդհանրացնելով Կիլիկիայի հարցում Ֆրանսիայի վարած քաղաքականության հետեւանքները՝ գալիս ենք այն եզրահանգման, որ զուտ շահագիտական խնդիրներով առաջնորդվող Ֆրանսիայի ղեկավար շրջաններն ապացուցեցին որ, հեշտությամբ կարող են «մոռանալ հայերին տրված բոլոր հանդիսավոր խոստումները»: Կիլիկիայի հարցում Ֆրանսիայի կառավարության տատանումներն ու զիջողական կեցվածքը վստահություն

⁴³ M. KEMAL, նշ. աշխ., էջ 60:

⁴⁴ Տե՛ս www.mfa.gov.tr/turkiye-cumhuriyeti-dissisleri-bakanligi-tarihcesi.tr.mfa:

⁴⁵ R. DE GONTAUT-BIRON, G. LE RÉVÉREND, D'Angora à Lausanne: les étapes d'une déchéance, Paris, 1924, p. 226.

ներշնչեցին այդ երկրամասի համար պայքարող ազգայնական ուժերին եւ միաժամանակ խիստ ցավալի հետեւանքներ ունեցան Կիլիկիայի բնակչության, հատկապես հայության համար: Հետեւանքը եղավ այն, որ Կիլիկիահայությունը՝ խաբված իր «մեծ դաշնակցից», հազարավոր նոր զոհեր տալով, այս անգամ անվերադարձ լքեց հայրենի Կիլիկիան: Անհրաժեշտ է նշել, որ իր դաշնակցին ոչնչով չգիշեց նաեւ Անգլիան: Լոզանում նրանք «ըստ արժանվույն հատուցեցին» Օսմանյան Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնություններին, առաջին հերթին իրենց փոքր «դաշնակցին»՝ Հայաստանին: Նախ՝ Լոզանի խորհրդաժողովում Հայկական հարցը «Ազգային օջախի» գաղափարից հասցվեց Թուրքիայի որեւէ անկյունում հայերի կենտրոնացման մտքին, հետո՝ տերությունների հավաքական կամքով տապանաքար դրվեց Սելրի դաշնագրի վրա:

Այս համապատկերում հարկ է նշել՝ Ֆրանսիան, իր դաշնակից Մեծ Բրիտանիայի հետ միասին, հետագայում եւս շարունակեց Թուրքիային սիրաշահելու իրենց քաղաքականությունը: Ավելին՝ 1930-ական թթ. երկրորդ կեսին Ֆրանսիական իշխանությունները, Թուրքիայի գերմանական խմբավորմանը միանալու հնարավորությունը կանխելու եւ վերջինիս բարեկամությունն ու զինակցությունն ապահովելու համար, Սիրիայի ժողովրդի ու պետության կամքին հակառակ, խախտեցին Սիրիայի տարածքային ամբողջականությունը եւ Ալեքսանդրետի սանջաքը «նվիրեցին» Թուրքիային:

Այս ամենը հերթական հիշեցումն է մեզ առ այն, որ մեծ պետությունների՝ փոքր ժողովուրդներին, ներառյալ իրենց իսկ դաշնակիցներին, տված խոստումներն ու անվտանգության «միջազգային երաշխիքները» հուսալի չեն եւ կարող են անվարան ու հեշտությամբ մոռացվել:

РЕЗЮМЕ

Окончание Первой мировой войны положило начало сложному процессу передислокации и перекройки политической карты послевоенного мира. Интересы союзников Великобритании и Франции пересекались, особенно на Ближнем Востоке, где глубокие разногласия по поводу раздела бывшей Османской империи долгое время не позволяли сторонам прийти к общему согласию. Особый интерес в этот период представляет глубокий и всесторонний анализ

специфики ближневосточной политики Франции, которому и адресована данная статья. В этом контексте представлены важные причины франко-турецких отношений, Киликии, политика уступок французских властей в «решении» проблемы и мотивы ее катастрофических последствий

SUMMARY

The end of World War I marked the beginning of a difficult process of rearranging powers and restructuring the postwar world political map. The interests of former allies England and France were intersected especially in the Near East, where deep contradiction around the division of territories of former Ottoman Empire did not allow them to come to terms for quite a long period. In this period, the in-depth and comprehensive analysis of the French Near Eastern policy, which is the goal of our study, is of special interest. The compliant policy of France towards the “solution” of Cilician problem, which could be explained by financial-economic interests, as well as the reasons and motives of its catastrophic outcome for Cilician Armenians are presented in this context.

